


Տարեկան գին 4 թուրք ֆլորին 8 ժանգ.
Վեցամսեայ 2 թուրք ֆլորին 4 ժանգ.
Չամսեայ 1 թուրք ֆլորին 2 ժանգ.
Գրառուաց 10 ժանգ.
Չամսեայ 5 ժանգ.
Չամսեայ 3 ժանգ.
Չամսեայ 2 ժանգ.
Չամսեայ 1 ժանգ.



ԼՐԱՔԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՆՈՅԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական վիճակին դժուարութիւնները կը շարունակեն և միտքերն անստուգութեան ու երկիւղի մէջ կը պահեն միշտ:

Մինչդեռ մէկ կողմէ Ռուսիա կը յայտարարէ թէ Պէրլինի դաշնագրութեան ճշդիւ գործադրութեանը կը փափաքէ, միւս կողմանէ իւր գիւտնադէտներն Եւրոպական տէրութեանց հետ բանակցութեան կը մտնեն յիշեալ դաշնագրութեան պակասները լրացնելու առաջարկութեամբ:

Առարկեալ պահանջներուն դըլիտներն երեք են: Նախ, կրօն, Պէրլինի դաշնագրութիւնը գործադրական տրամադրութիւն չունի. այսինքն դաշնագրութեան տրամադրութիւնները չգործադրուած ժամանակ գործադրող գործութիւն մը նըշանակուած չէ: Ասով ըսել կուզեն Ռուսիոյ դիւանագէտը թէ՛ Վեհաժողովն ինչպէս որ Աւստրիոյ յատուկ պաշտօն առաւ իւր որոշմանը Պոսնիոյ և Հէրսէքի մէջ գործադրելու, Ռուսիոյ ալ պէտք էր պաշտօն տար, որպէս զի՝ եթէ Թուրքիա դաշնագրութեան ինչ ինչ կէտերը գործադրելու դժվարակի կամ գտնադիւր, Ռուսիա անձամբ գործադրէ զանոնք: Երկրորդ, Թուրքիա դեռ անկեղծաբար չմտաւ իւր առջև դնուած ճանքուն մէջ. Յունաստանի և Գարատաղի նկատմամբ Վեհաժողովին հըրամաններուն կատարելագոյն չհնազանդեցաւ: Վերջապէս Ռուսական զօրաց դրաւած երկիրներուն մէջ անշուշտ խռովութիւնը պիտի ծագին երբոր Ռուս զօրքերը մեկնին, ասոր համար պէտք է որ Ռուսիա բուսանիոյ մէջէն անցնող զինուորական ուղի մ'ունենայ իւր ձեռքն, որպէս զի հարկ եղած ժամանակ բուսանի վերադառնայ և բարեկարգութիւնը հաստատէ:

Ասոնք են Պէրլինի դաշնագրութեան կամ Վեհաժողովին պակաս թողուցած կէտերն, որոց լրացումը կը խնդրէ եղբր Ռուսիա:

Միւս կողմանէ Այսթինիանի դաշնագրութեան անփոփոխ մնացած յօդուածներն ալ մշտնջենաւոր առիթ մ'են դժուարութեանց: Օրինակի համար, եթէ վաղը Ռուսիա երեք հարիւր միլիոն ռուպլի պատերազմական տուգանքը պահանջէ Թուրքիայէն, և նա ալ ինչպէս որ տարակոյն չկայ՝ չկրնայ վճարել, եւրոպայ ալ ինչ կրնայ ընել, քանի որ Պէրլինի դաշնագրութիւնն այս մասին տրամադրութիւն մ'ըրած չէ: Դատ հաւանական է որ Ռուսիա այդ հատուցումն իւր ձեռքով կտորտրուի:

Երեւ, այսինքն երկիր դրաւել ուղէ, հետեւաբար նոր կնճիռներ ծագին և դարձեալ խաղաղութիւնը վրդովի: Այս նախատեսութեամբ է որ, Այսթինիանի դաշնագրութեան անփոփոխ մնացած կէտերուն վրայ հիմնեալ զատ դաշնագրութիւն մը կընքելու պահանջով, զոր Ռուսիա կընէ Բ. Դաւէն, ապագայ դժուարութեանց աղբիւր մը կընկատուի քաղաքագէտներէ:

Մայրաքաղաքիս Ռուսական դեսպան Լուպանով իշխանն՝ որ անցեալ շաբթու Ալբանիոյ պաշտօնի զննցած էր, շաբթու առաւօտ Կ. Պոլսի վերադառնալով, նոյն օրը տեսակցեցաւ Մեծ Եպարքոսին հետ:

Կրտսի թէ այս տեսակցութեան մէջ Լուպանով իշխանն ստիպողական կերպիւ պահանջներ է որ Բ. Դաւէն անցեալներն իրեն հաղորդուած ծրարագրին համեմատ վերջնական դաշնագրութիւնը կնքէ Ռուսիոյ հետ, ապա թէ ոչ, Ռուսիա Ալբանիոյ մէջ չպիտի մեկնի: Իսկ եթէ յիշեալ դաշնագրութիւնը կնքուի, Ռուսական իշխանութիւնը ամեն ջանք պիտի ընեն մինչև երկու ամիս Օսմանեան հողէն մեկնելու:

Վաղը ի խօսքին նայելով, Ռուսական դեսպանը ծանուցադր մ'ալ զրկել է Բ. Դաւէն առաջարկելով որ Պոլսի վրայ և Ալբանիոյ մէջ ընկնող իսլամացի անշարժ սեփականութիւնները՝ Բ. Դաւէն ուղղակի իշխանութեան ներքև գտնուող դաւառները բնակեալ Պոլսի քաղաք անշարժ սեփականութիւններուն հետ փոխանակուին:

Այս երկու կարևոր առաջարկութեանց ինչ պատասխան տրուած չէ երբ դեռ ճշդիւ յայտնի չէ:

Այսօր Կոստանի մէջ Անգղիացի յառաջնադաս ինչպէս որ կը նախատեսէինք՝ դժուարութեանց հանդիպել կ'սկսի:

Լահորէն նոյն 30 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ալքիտէ կոչւած լեւոնդանի ցեղերն, որք առերես Անգղիացի բարեկամութիւն ցոյց կուտային, խօսքեր կրկնեցին պաշարել և Եսուրուտի ու Ալի-Մէսնիտի Անգղիական զօրաբաժիններուն հաղորդակցութիւնները կտրել են: հետեւաբար Ալի-Մէսնիտէն Եսուրուտ զրկուած պաշարի կարավանները չկրնալով յառաջանալ՝ ետ դառնալու պարտաւորուել են: Սակայն Լոնտոնէն դեկտ. 2 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Անգղիական իշխանութիւնները հասցնելով խօսքեր կրկնեցին պաշարող լեւոնդանները ցրուել և հաղորդակցութիւնները վերահաստատել են:

Բայց միւս կողմանէ Լահորէն դեկտ. 2 թուով հեռագիր մ'ալ կը

ծանուցանէ թէ Խուրուսի անգղիական զօրաց Բէյլաբի կրճին դէմ ըրած առաջին յարձակումն ետ մղուել է՝ անշուշտ մեծ կորուստով: Նըմանապէս Գէթթի անգղիական զօրաբաժինն ալ իւր բեռնաբարձ ուղտերը կորսնցնելու պատճառաւ՝ Գան տահարի դէմ յարձակումը դարձան թողուցելու: Եւ ինչը մեծ գործութիւն կը գումարէ ի ճէլապապատ:

Լոնտոնէն եկած ուրիշ հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ Պ. Կըլաւսթօն ատենաբանութիւն մ'ընելով՝ դաւանապէս քննադատել է ըզլորտ Պիքսթիլիտ, յայտնելով թէ Աֆղանստանայ պատերազմն անիրաւ է, և նոր անիրաւութեանց պիտի առաջնորդէ զԱնգղիա, անիրաւութիւնը, որը Հնդկաստանի աւերման պատճառ պիտի լինի:

Աւստրիական երեսփոխանութեան երմտական յանձնաժողովին մէջ Անտրաշի կոմսը նոյեմբեր 30ին ատենաբանութիւն մ'ընելով քաղաքականութեան ներկայ վիճակին վրայ, հաստատեց որ եթէ Աւստրիա Պոսնիան ու Հէրսէքը չդրուէր, սահմանագիծին վրայ գտնուող Աւստրիո-Հունգարական դաւառները փոքրիկ պետութեանց կամքէն կ'սկսեալ պիտի լինէին: Եթէ Աւստրիա Վեհաժողովը կողմէ իրեն յանձնուած պաշտօնն ընդունած չլըլար, Ալբանիան ինքիւր նորէն պիտի ներկայանար իւր բոլոր ընդարձակութեամբ, և Պոսնիոյ ու Հէրսէքի դրաւման պահանջով և աւելի մեծ զսպարութեանց ենթակայ պիտի լինէր: Տէրութիւնը, աւելցուց Անտրաշի կոմսը, Պոսնիոյ և Հէրսէքի դրաւման Աւստրիոյ յանձնելով, Ալբանիոյ մէջ անոր տնեցած շահուց օրինաւորութիւնը ճանչցին, հետեւաբար վճարեցին թէ մեծ և հզօր Աւստրիա մ'Եւրոպական պիտոյր մ'է:

Քանի մ'Երեսփոխանը հաջողցին կառավարութեան թէ Պոսնիոյ և Հէրսէքի դրաւման ուղիով ժամանակ պիտի տէն, և թէ կառավարութիւնը գիտաւորութիւն ունի՝ այդ գաւառները մշտնջենապէս գրաւելու կամ այդ գրաւումը մինչև Նովի-Պազար մղելու:

Այս հարցման Անտրաշի կոմսը դեկտ. 2 ին պատասխանելով ըսաւ թէ՛ Պոսնիոյ և Հէրսէքի դրաւման պիտի դադրի այն պահուն, որ եւրոպիոյ գիտած արդիւնքը ձեռք բերուի, և Թուրքիա ալ Աւստրիոյ ըրած ծախքերն հատուցանելով երաշխաւորութիւններ տայ որ այդ գաւառացի մէջ Աւստրիոյ հաստատելիք վիճակն այնուհետեւ չաւրուի: Գրաւման պաշտօնն, աւելցուց Անտրաշի կոմսը, չկրնար փոփոխուի կամ չափաւորել՝ առանց Պէրլինի դաշնագրութեան:

Թիւրք կնքող տէրութեանց միակամ հաւանութեան:

Այս յայտարարութիւններէն կամ մանաւանդ յառաջ գրուած պայմաններէն գիւրաւ կը հասկցուի թէ Աւստրիա Պոսնիայէն ու Հէրսէքէն յայտարարեալ երկու չունի:

Փիլիպէն եկած լուրերը մինչև նոյեմբեր 16/28 կը հասնին:

Տնտեսքօ Գորոքքօ իշխանը Լիվադիա ըրած ուղևորութենէն դառնալով՝ նոյն 13/25 ին հոն հասեր և մէկ ժամ միայն կենալով՝ հրաման ըրել է որ Պուլպար աղջկանց վարժարանը Սօֆիա փոխադրուի:

Եւրոպական յանձնաժողովն իւր նիստերը կանոնաւորապէս կը շարունակէ: Կըսուի թէ պաշտօնական լեզու ինգլիսն արդէն լուծուել է: Երկրին մէջ խօսուած երեք լեզուները՝ զուններն՝ այն է Յունարէնը Թուրքերէնն ու Պուլպարերէնը՝ վարչական գործոց մէջ պաշտօնական լեզու պիտի ճանչուին:

Քաղաքին և շրջակայի բնակիչները կը հաստատեն որ եթէ Եւրոպական յանձնաժողովն յաջողի Ալբանիան բուսանի նահանգը Սուլթանին ուղղակի իշխանութեան ներքև դնել, իրենք պիտի մեկնեն երկրէն և Սօֆիայի դաւառները ինքնակառավարութեան ընկնեն:

Ալբանիան բուսանի սահմանները դժեւու պաշտօն ունեցող զինուորական յանձնաժողովն իւր պաշտօնը չկրնալով կատարել՝ Կ. Պոլսի վերադառնաւ:

Կրտսի թէ հաղորաւոր Պուլպար կանայք տղայք և զինեալ մարդիկ յանձնաժողովին անդամները պաշարելով ազգակեր են թէ Թուրքացի իշխանութիւնն երեք չեն ընդունիր: Յանձնաժողովը անդամները չկրնալով ամբողջ քաղաքութեամբ ցրուել և իրենց պաշտօնը շարունակել, Կ. Պոլսի դաւառելու հարկադրուել են: Դանիան՝ Ռուսաց զինուորական իշխանութեան կողմէ պաշտօնատարներ հասնելով՝ շատ ազգայն են յանձնաժողովը անդամոր որ ետ դառնան և իրենց պաշտօնը Ռուսական զօրաց պաշտպանութեամբ շարունակեն, բայց անոնք չեն ընդունել որ այս առաջարկութիւնն, և ճանրանին շարունակելով Կ. Պոլսի եկած են:

ՀՆՈՒՍԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բէյլա 2 դեկտ. Աւստրիական պատուիրակութեան եւ միտական յանձնաժողովը Պոսնիոյ և Հէրսէքի դրաւման ծախսը համար առժանակեալ կերպիւ 13 միլիոն ֆիօրին յատկացնել որոշեց, իրիւ 1879ի զինուորական օրաքրքր կարգի ծախսը: Գետն յանձնաժողովը արտաքին գործոց նախարարութեան ծախսը վերա-

բերեալ տեղեկագրին վրայ վիճարանեց : Անտրաշի կամը խառն քննադատեց տեղեկագիրն՝ յայտնելով թէ իբր ամբաստանագիրը և իբր անվտանգութեան քուէ կը նկատէ զայն , որոյ դէմ՝ կրնայ իւր սահմանադրական պատգամները ցուցնել : Յանձնաժողովը Յի դէմ 12 ձայնիւ ընդունեց տեղեկագիրը :

Բեղրադուրի 5 դեկտ.

Չարն այսօր Մոսկայի մէջ բանախօսութիւն մընեկով ըսաւ թէ կը յուսայ որ քիչ օրէն վերջնական դաշնագրութիւնը կը կնքէ Թուրքիոյ հետ :

Լոնտոն 5 դեկտ.

Լազօրէն պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ թէ Աֆղանստանի Էմիրէն նամակ մ'առնուեր է , բայց պարունակութիւնն յայտնի չէ :

Խիստին կրճին մէջ եղած յարձակմանց զորոյցը չարազանց է : Ալի-Մէսէրտի հրամանատարին յանձնուած է յիշեալ կրճին միջոցաւ հաղորդակցութիւն ներս ապահովել :

Այս ամառուտ Տաճկացի Գուրպա

Լոնտոն 5 դեկտ.

Ազատական կուսակցութեան գլխաւոր անդամներն Հարթիսիկթըն մարքիզին հրաւիրանալով ի ժողով դուրսբեցան՝ խորհրդարանին բացուած ժամանակ իրենց լաւեղբ ընթացից վրայ խորհրդակցելու համար , և որոշեցին թաղուհւոյն ճառին ի պատասխան պատրաստուելիք ուղերձին մէջ բարեխօսութիւն բնաւ չտաւ : Զարկել ասկէջ զատ , Աֆղանստանի պատերազմին համար խնդրուած արտաքոյ կարգի վարկը չըլտնալով , յիշեալ պատեւրադմին նկատմամբ կառավարութեան աշխարհավարութիւնը դատաքննելու առաջարկ մը ներկայացնեն :

Թայպի կըսէ թէ խնդրուելիք արտաքոյ կարգի վարկը մէկ միլիոն լիւրայէն աւելի չպիտի լինի :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ առաւօտ՝ վեհ. Սուլթանն հետեւեալ նախարարական փոփոխութիւններն ըրաւ .

Ելմտական յանձնաժողովոյ նախագահ Թուհուզի Բարձր խայրէտտին փաշան Մեծ-Խայրէքոս անուանեցաւ : Փոխանակ Բարձր Սաֆվէթ փաշային :

Սարեանի Զատէ Դաղասկէր Ահմէտ Խատտէֆէնաին Դէյլիսի իսլամական ւանեցաւ .

Դաղի Օսման փաշան պատերազմական գործոց նախարար անուանեցաւ .

Կիրիտի կուսակալ Ա. Դարաթոտորի փաշան արտաքին գործոց նախարար անուանեցաւ .

Կայսերական անձնական գանձուն վերստեհուց Սայիտ փաշան Դատական գործոց նախարար անուանեցաւ .

Սուրիոյ նախորդ կուսակալ ճէվաթէ փաշան առեւտրական գործոց և երկրագործութեան նախարար անուանեցաւ .

Պաղատտի կուսակալ Դատրի փաշան ներքին գործոց նախարար անուանեցաւ .

Սաֆա բաշան հասարակային շինութեանց նախարար անուանեցաւ .

Աթէնքի Օսմ. Կեսպան Պօթիստէն պէյ Կիրիտի կուսակալ անուանեցաւ վեղիւրութեան աստիճանաւ .

Տարը Ծուրայի անդամ Սաֆվէթ փաշան ոտորկանութեան նախարար անուանեցաւ .

Պետական խորհրդոյ անդամ Սա. յիտ Էֆէնաին Մեծ-Խայրէքոսի խորհրդակցական (Միւսթէշար) անուանեցաւ .

Դատական նախարարութեան մէջ թուպճի Բիզա պէյ արքունի պալատան առաջին քարտուղար անուանեցաւ .

Թէհրանի նախորդ գեսպան Բիզա պէյ Կ. Պոլսոյ քաղաքապետ անուանեցաւ .

Արտաքին գործոց նախարարութեան նախորդ Գեսթիպ Սօֆեալը Բէրթէվ Էֆէնաին պաղարական դիւանին տնօրէն անուանեցաւ :

Դարձեալ կայսերական հրամանաւ՝ Կայսերական Տիմանիկ առաջին թարգման Միւսիկ Էֆէնաին մեծ ա. բարոգապետ անուանեցաւ փոխանակ Գեսթիպ պէյին .

Հաճի Իզզէթ փաշան Եւրոպական Թուրքիոյ Օսմանեան գաւառաց ճէվ կատարուելիք բարենորոգումները խմբագրող յանձնաժողովին նախագահ անուանեցաւ .

Դաղթականներն իրենց հայրենիք վերադարձնելու պաշտօն ունեցող խառն յանձնաժողովին անդամ Սաֆվէթ փաշան Խոլղատի կառավարիչ անուանեցաւ :

Պատրայի գաւառն՝ որ զատ կուսակալութիւն եղած էր , Պաղատտի կուսակալութեան հետ միացաւ :

Այս ամառուտ Տաճկացի Գուրպա նի տօնին առթիւ՝ վեհ. Սուլթանն հանդիսիւ Տոլմա պահճէի մէջիւթն երթալով կրօնական արարողութեան ներկայ գտնուեցաւ :

Բ. Դրան պաշտօնարանները ներկայ տօնին առաջին և երկրորդ օրերը միայն գոց պիտի մնան :

Երկու օրէ ի վեր զորոյց կը պրաքտի թէ Ռուսական զօրքերը վերստին Զօրու մտեր են :

Վաղթթ լրագիրն այս օրը սուտ կը հանէ :

Դամասկոսի Սուրիա լրագիրը կը ծանուցանէ թէ Լիբանանու Բաշէյա աւանին մէջ Օսմանեան կանոնադր զօրաց և Տրիպոլիտուն միջև պատահած կռուին պատճառները քննելու հանգարտութիւնը վերահաստատուելու համար Սուրիոյ կուսակալին կողմէ զրկուած պաշտօնատարներն և զօրքերն իրենց պաշտօնը կատարելով , այն է կռուին հեղինակներն ու գրգռիչները բռնելով ետ դարձեր են :

Միջագետէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ Բրդաց ապստամբութեան դուրսը ճէվիքէի նահանգին մէջ գտնուած հեռագրական կայանները դրաւելով , իւր տեղակարներուն հետ հեռագրով կը թղթակցի : Ասկէջ զատ՝ այն երկիրներէն անցնող ուղեւորաց անցագիր կուտայ Օսման Նուրի Խան-Պէտէրիսի իմիր Պահման , ստորագրութեամբ :

Յիշեալ ապստամբաց վրայ շարկուած կայսերական զօրքերը գետ չեն հասած այն կողմերը :

Կարսի մօտ յաղթուող Օսմանեան բանակին հրամանատարներէն ոմանց հետ նաեւ կարսի հրամանատար Հիւսէյին Համի փաշային դատաստանն յառաջիկայ շաբաթ օրը պիտի սկսի :

Ա. Գ. Ա. Յ. Ն.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ նոյն. 24 ի Գալաթիս :

Ատանը պիտի բացուի ճիշդ ժամ 6ին և գոյուր 10ին :

Հրաւիրեալ են Երեսփոխան Էֆէնաիններն՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ :

20 նոյեմբ. 1878 ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլիս

ՊԱՏՐԱՐԻԱՐԿ Կ. ՊՕԼՍՈՑ ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊԵՆՈՎՈՍ

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկագիր յարաբերութեան գիւտնի՝ Հիւանդանոցի Հոգաբարձութեան գէմ՝ եղած գան. դատանաց համար .

2. Տեղեկագիր նախաձեռնութեան գիւտնի՝ Պէկեան Էֆէնաինի ամբաստանագրոյն նկատմամբ :

Ատենագիր

Մ. Բ. Մեքէն

Մարաշէն գրուած նամակի մը մէջ հետեւեալ տեղեկութիւնները կը կարդանք .

« Հոկտ. 29 երկուշաբթի օրն իրիկուան դէմ զինուորական չեփօրներու ձայներ լսուելով Մարաշի մօտ , Ժողովուրդն ահաւոգողով պաշարեալ , կառավարութեան ապարանքը կը վաղէ պտտածառն իմանալու , և ահա երկու գումարտակ Օսմ. զօրականներէ շրջապատեալ ալ ուր ու բարձրահասակ անձ մը , Յրեւելի փանուց վանահայր Նիկողոս եպիսկոպոսը , ձիւ մը վրայ հեծած , ետեւէն ալ 120ի չափ Զէյթունցիք ձեռքերն կապուած կարգաւ կառավարութեան ապարանքը կը մտնեն , Զէյթունցիք իրենց զինուորական հետ բաւել շարուելով , եպիսկոպոսն հոն վար կը դուրս , իսկ միւսները կէսը զօրանացը , կէսն ալ բանտը կը զրկուին :

« Եպիսկոպոսն ալ քիչ մ'եաքը , վերայի թիկնոցը մէկդի առնուելով , զոր սպային մէկը ճանաչան մեղքեւալով վրան առեւ է , վարտիքով շապիկով մը և բոպիկ՝ եպիսկոպոսը զանտը միւս Զէյթունցիք քով կը զրկուի : Տեսնելու եկող քրիստոնէայ բնակիչք արտաքինն արիւնով լցուած՝ արտառուած ձոր ետ կը դառնային :

« Ասոնց այսպէս բռնուելով Մարաշ բերուելուն պատճառն հետեւեալ կերպիւ կը պատմուի կառավարութեան մարդոցմէն :

« Հոկտ. 27ին առաւօտուն կը տեսնուի որ Զէյթունցիք Զօրք վարժապետ Յարութիւն , Գլուխը խել մ'անձինք ժողոված , Զէյթունի Օսմանեան զօրաց վրայ կը յարձակի . այս յարձակումն օր առաջ իմացած է եղեր Մարաշի կառավարիչ վէյսի փաշան : « Յարձակողաց մօտեցանուն վրայ , իսկայն 23 զօրաւորակ զօրք կը զրկուին , որք հնազանդութեան կը հրաւիրեն զանոնք . իսկ Հայերն ի պատասխանի կրակ կընեն զօրաց վրայ . ասոնք ալ փոխադարձ կրակով կը պտտախանեն և կ'սկսին ապստամբաց վրայ յարձակիլ , որք չկրնալով դէմ դնել կը փախչին և զօրքերէն կը հայածելին մինչև Միլիալ դիւղն , որ Զէյթունէն 2 ժամու չափ հեռի է , և հոն կը պաշարուին զօրքերէն , որք 30ի չափ Զէյթունցիք , Զօրք վարժապետ Յարութիւն և Յրեւելի վտանահայր Նիկողոս եպիսկոպոսը նոյն գիւղին մէջ ողջ բռնելով՝ նախ Զէյթուն կը տանին , անկէ ալ տաւալուց բանտարկեալ 90ի չափ Զէյթունցիներն ի միտին առնելով Մարաշ կը բերեն :

« Այժմ Մարաշի մէջ 200ի չափ Զէյթունցիք կան եղեր բանտարկալ , որոց հետ է նաեւ վերոյիշեալ Նիկողոս եպիսկոպոս վանահայրն :

Բեղրադուրիէն իզմիրի Արշայոյս լրագրին ուղղեալ նամակէ մը դուհաթեալ կրնանք թէ Պատկանեան ձերուանադարձ Տ. Գաբրիէլ Արթ. քահանայն՝ կրկին իւր քահանայութեան պաշտօնին կոչուել է , յորմէ 1853էն ի վեր արգելեալ էր Ռուսիոյ կայսեր հրամանաւ :

Ըստ նամակագրին՝ ոչին թոյլտընուելուն ի շարհս վեհ. կաթողի-

կոսին, Կ. Պոլսոյ արք. Հօրք, և բարեխօսութեան արք. Տ. Խորէն Նար-Պէյ Արշայոյսին եղած է :

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

ԱՍԻԱԿԱՆ ԳԱԽԱՌԱՅ ԹՈՒՐԻՅՈՑ

Սոյն մակագրով Ֆիօրէնցայի կոնքրէթ Գիւտնի լրագրին մէջ հետեւեալ կարեւոր յօդուածը կը տեսնուի :

« Թուրքիա այսօր մեծ պարտաւորութիւն մ'առնի . բարենորոգում , բարենորոգում , բարենորոգում . ապա թէ ոչ՝ Եւրոպիոյ մէջ տեղի ունեցած իրողութիւնք Ասիոյ մէջ ալ տեղի կ'ունենան . և այն ժամանակ ամեն ճիշդ ապագաման կըլլայ : Բարենորոգումն այսօր անհրաժեշտ է .

1. Վստի զի կերեկի թէ Թուրքիա ալ այդ համագումն ստացաւ .

2. Վստի զի այսպէս կը պարտաւորէ Ֆէրիին գաշնագրին պայմաններէն մին :

3. Վստի զի , ինչպէս որ Լորտ Սալիպըրի Անգլիական խորհրդարանին մէջ յայտնեց , Թուրքիոյ տըրուած այս պատեհութիւնը Էթէմ կըրնայ ըլլալ :

4. Վստի զի Թուրքիա այժմ իւր նամակաւորութեան մը ներքեւ կը գըտնուի , զոր ինքն ստեղծեց յունիս Էին Անգլիոյ հետ կուած դաշամբն .

5. Վստի զի Եւրոպական պետութիւնք պարբերական տեղեկագիրներ խնդրեցին բարենորոգման համար ի գործ դրուելիք միջոցներուն նկատմամբ , յաւելլով իսկ թէ իրենք անոնց դործագրութեան պիտի հրակեն , և կարծես թէ կըսեն . « Վստի քեզ եթէ չգործագրես :

« Այսօր Ասիական գաւառաց բարենորոգումն Թուրքիոյ համար կենսական է . մինչև այսօր միայն Եւրոպական գաւառաց վրայ կը խօսուէր , և երբ Արեւելեան Քրիստոնէից խօսքը կ'ըլլար , միայն Պաղատտէր Էթէմքիք և Ռումէլիցիք կ'իմացուէին . այժմ ոչ ևս Բայց խնդրին այն է թէ այդ բարենորոգումն ինչ ձևով պիտի կատարուի :

« Ասիական Թուրքիա՝ ըստ Գաղաքական բաժանման կը պարունակէ այսօր 17 կուսակալութիւնք (վիլայէթ) և 4 գաւառ (սանճակ) , որք ուղղակի կեդրոնական վարչութիւնէն կախում ունին , չորս գաւառներն են Ճանիկ , Խարբըրդ , Լիբանան և Երուսաղէմ :

« Այս կուսակալութիւններէն ու գաւառներէն զատ կայ նաեւ Կ. Պոլսոյ գաւառին Ասիական մասը , Այս ընդարձակ երկիրն որ երկուքու կեն միկուն քառակուսի հաղարամթիւնէն աւելի է , այսինքն Գաղղիոյ հինգ պատիկն և իտալիոյ ութ պատիկն . ըստ աւելի ճիշդ հաշուոց՝ հազիւ թէ տասն չորս միլիոն բնակիչ ունի : (Հոս յօդուածը մանրամասն տեղեկութիւններ կ'աւելցնէ իւրաքանչիւր գաւառի բնակչաց թւոյն վրայ , Սալոնիկէն և Ճէրէքէն Ասիական լրագրէն աղիւսակներ քաղելով և բաղդատելով)

Վերջապէս քիչ մ'ալ աւելի հաշուելով կրնանք տասնե վեց միլիոն հաշուել՝ առ առաւելն՝ Ասիական Թուրքիոյ բնակիչներն , որոց Գաղղիոյ գաւառներն հարկ եղած է :

Զայս կատարելու համար Թուրքիա զանազան ճանքաներ կրնայ փորձել , բայց մեք երկուքը միայն ի նկատի կ'առնուք .

1. Չանազան տարրներն ի մի Օսմանեան ազգութիւն ձուլել :

* Իրօք Ա. Պատրիարք Հօր միջնորդութեան արգիւնէն է՝ ի ձեռն Գեր. Խորէն սրբապետի :

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԻՐԱԳՐՈՑ
ՉԱԼԱԹԱ ՆՕՐԸ ԽԱՆ